ՀԵՀԵՄ
Կենտրոնական գրասենյակ

Federal Foreign Office

CIVIL SOCIETY COOPERATION

# Քրիստոնեական երիտասարդական աշխատողի ունակությունները

# Քրիստոնեական երիտասարդական աշխատողի ունակությունները

Երիտմիություններում քրիստոնեական երիտասարդական աշխատողի պարտավորություններն իրականացնում է հոգևոր սպասավորը և/կամ տեղի ակտիվ երիտասարդներից մեկը (ատենապետը), ինչպես նաև այս գործունեությամբ կարող է զբաղվել օրինակելի, ակտիվ երիտասարդը, որը տիրապետում է համայնքի մասին գիտելիքների, ունի առաջնորդող, համախմբող և ոչ կոնֆլիկտային հատկանիշներ, մշտապես զարգանալու և նոր գիտելիքներ ստանալու ձգտում: Երիտասարդները կարծում են, որ քրիստոնեական երիտասարդական աշխատողի գործունեությունն անմիջականորեն կապված է եկեղեցու առօրյայի հետ ու ցանկալի է չհակասի աստվածաշնչյան տողերին: Ինչպես նաև քրիստոնեական երիտասարդական աշխատանքով զբաղվող անձը պետք է ունենա համապատասխան կրթություն, արժեհամակարգ, գիտելիքներ ու հմտություններ, տեղեկացված լինի այս ոլորտում առկա բոլոր նորարարական մեթոդներին, մշտապես մասնակցի վերապատրաստումների, ունենա թվային հմտություններ՝ թվային սերնդի հետ հաղորդակցվելու համար: Եվ քանի դեռ այս ամենը չկա, քրիստոնեական երիտասարդական աշխատանք իրականացնելը բավականին բարդ է, և միությունները բավարարվում են փոքրիկ միջոցառումների անցկացմամբ, որոնք հիմնականում իրականացվում են երիտասարդների միջոցով և ուղղված չեն երիտասարդների զարգացմանը:

Քրիստոնեական երիտասարդական աշխատողն իրականացնում է երիտասարդական աշխատանք՝ նպաստելու երիտասարդների հոգևոր, բարոյական, անհատական, սոցիալական և կրթական աճին, զարգացնելու նրանց ներուժը և օգնելու երիտասարդներին լիարժեք հաստատվելու հասարակության մեջ՝ որպես հայ քրիստոնյա: Աշխատում է ՀԱՍԵ երիտասարդաց միությունների երիտասարդների հետ, մշակում, իրականացնում և գնահատում է երիտասարդական ծրագրեր և նախագծեր, համագործակցում է տարբեր ոլորտների շահագրգիռ անձանց, խմբերի և կազմակերպությունների հետ:

Քրիստոնեական երիտասարդական աշխատանքում ընդունելի է զարգացնել հետևյալ մոդելը.








**Արժեք** ասելով հասկանում ենք այն որակներն ու համոզմունքները, որոնք մեծապես ազդում են կյանքի տարբեր իրավիճակներում մեր վերաբերմունքի և գործողությունների վրա: Օր.՝ առաջին հերթին, քրիստոնեական բարոյախոսությունը, որ մեզ ավանդվել է Սուրբ Գրքի միջոցով: Կազմակերպչական առումով էլ, օրինակ, հավատում ենք թիմային աշխատանքի և որևէ նպատակի շուրջ միավորված աշխատելու կարևորությանը, հոգատար ենք և պատրաստակամ օգնության հասնելու մեր թիմակիցներին, նախաձեռնող ենք, բաց ենք կառուցողական քննադատության համար, կարևորում ենք այլոց հետ հետադարձ կապը, վստահություն ենք արթնացնում և վստահում ենք մյուսներին:

**Գիտելիքը** բոլոր այն փաստերն են, տեղեկությունները, սահմանումները, կոնցեպտներն ու մոդելները, որոնց մենք տիրապետում ենք որպես հայ քրիստոնյաներ: Դրանց մասին կարող ենք կարդալ տարբեր աղբյուրներում, հարցնել հոգևորականներին և փոխանցել դրանք ուրիշներին: Թիմային աշխատանքի դեպքում դրանք տեսական գիտելիքներն են աշխատանքի կազմակերպման առանձնահատկությունների, անհրաժեշտ գործիքների, որոշումների կայացման, տարաձայնությունների հաղթահարման, հետադարձ կապ հաստատելու վերաբերյալ:

**Հմտությունն** այն ամենն է, ինչը կարողանում ենք անել՝ գործնականում կիրառելով մեր ունեցած գիտելիքները: Օր.՝ կարողանում ենք արդյունավետ հաղորդակցվել մեր միության անդամների հետ, պլանավորել մեր համատեղ աշխատանքը, կատարել աշխատանքի բաժանում, կայացնել որոշումներ, հաղթահարել տարաձայնությունները, հետադարձ կապ ապահովել:

**Մենք կարող ենք անել շատ բաներ, բայց միշտ չէ, որ կարողանալ նշանակում է իրականում անել, և հենց մեր արժեքներն ու վերաբերմունքն են պայմանավորում մեր հակվածությունը՝ որևէ բան անելու կամ չանելու:**





Ուստի քրիստոնեական երիտասարդական աշխատողի առաքելությունն է քրիստոնեական, հայրենասիրական արժեքների հիմքով ստեղծել երիտասարդների համար հեշտ ընկալելի, մատչելի նյութեր, ծրագրեր, մատուցել այդ գիտելիքները տարատեսակ ոչ ֆորմալ կրթական մեթոդների միջոցով և ձևավորել համապատասխան հմտություններն ու գիտելիքները՝ իրենցից կրտսեր երիտասարդներին փոխանցելու համար:

Քրիստոնեական երիտասարդական աշխատողի կողմից տարբեր երիտասարդական խմբերի հետ աշխատելու տարբեր պատրաստվածության աստիճան և հմտություններ են անհրաժեշտ:

Հնարավոր երիտասարդական խմբերը, որոնց հետ կարող է առնչվել քրիստոնեական երիտասարդական աշխատողը, հետևյալն են.

- Տոտալիտար աղանդներ
- Օտար երկրում ծնված, մեծացած, կրթություն ստացած երիտասարդներ
- Ընտանիք, երեխաներ ունեցող երիտասարդներ
- Հաշմանդամություն ունեցող երիտասարդներ
- Սահմանամերձ շրջանների երիտասարդներ
- Բանակային երիտասարդություն
- Գյուղական երիտասարդություն
- Իրավախախտ երիտասարդներ
- Վատ սովորություններ և կախվածություններ ունեցողներ (ալկոհոլիզմ, խաղամոլություն և այլն)
- Փախստականներ
- Որևէ զբաղվածությունից, կրթական գործընթացներից դուրս մնացած երիտասարդներ /NEETs/
- Ուսանողներ
- Ակտիվ երիտասարդներ







# *Քրիստոնեական երիտասարդական աշխատողի պորտֆոլիո*

Քրիստոնեական երիտասարդական աշխատողի պորտֆոլիոն գործառույթների և ունակությունների մի փաթեթ/մոտեցում է, որը ստեղծվել է՝ հիմք ընդունելով ԵՄ-ի մի շարք երկրներում ակտիվորեն գործարկվող երիտասարդական աշխատողի պորտֆոլիոն: Այն հետաքրքիր և արդյունավետ գործիք է՝ չափելու համար քրիստոնեական երիտասարդական աշխատողի ունակությունները և ուժեղացնելու վերջինիս՝ նոր գիտելիքներով ու հմտություններով:

Հետևյալ սանդղակը նախատեսված է տպելու և լրացնելու համար:

## Գործառույթ 1. Աշխատանք քրիստոնյա երիտասարդների կարիքների և ակնկալիքների հետ

| | | |
|---|---|---|
| 1.1 **երիտասարդների հետ դրական, առանց քննադատության հարաբերությունների կառուցման ունակություն**<br>Այն ներառում է.<br>• Արժեքներ. ապրումակցում, գաղտնիության ապահովում, երիտասարդների տեսակետներով հետաքրքրվածություն<br>• Հմտություն. ակտիվ լսելու ունակություն, առաջնորդություն | Սա կարևոր չէ իմ աշխատանքի համար<br>Շատ բան ունեմ սովորելու<br>Չգիտեմ<br>Կարող եմ կատարելագործվել<br>Չեմ հասկանում՝ դա ինչ է<br>Կարծում եմ՝ ես լավ եմ սրանից<br>Շատ հմուտ ու փորձառու եմ սրանում | **Նշումներ/օրինակներ** |
| **1.2 երիտասարդների կյանքի սոցիալական համատեքստի ընկալման ունակություն**<br>Ներառում է.<br>• Գիտելիք. երիտասարդի կարգավիճակը, հատկապես նրանց, ովքեր կյանքի դժվարին իրավիճակում են գտնվում<br>• Հմտություն. վերլուծություն, տեղեկատվական մենեջմենթ | Սա կարևոր չէ իմ աշխատանքի համար<br>Շատ բան ունեմ սովորելու<br>Չգիտեմ<br>Կարող եմ կատարելագործվել<br>Չեմ հասկանում՝ դա ինչ է<br>Կարծում եմ՝ ես լավ եմ սրանից<br>Շատ հմուտ ու փորձառու եմ սրանում | **Նշումներ/օրինակներ** |
| **1.3 քրիստոնեական երիտասարդական աշխատանքի պլանավորման, իրագործման և գնահատման մեջ համապատասխան մեթոդներով երիտասարդների մասնակցայնության ապահովման ունակություն**<br>Ներառում է<br>• Արժեք. ազնվություն, համբերատարություն, մեծահոգություն, երիտասարդների տեսակետներով հետաքրքրվածություն<br>• Գիտելիք. երիտասարդների մտահոգությունները, հետաքրքրություններն ու կարիքները, Սուրբ Գրքի | Սա կարևոր չէ իմ աշխատանքի համար<br>Շատ բան ունեմ սովորելու<br>Չգիտեմ<br>Կարող եմ կատարելագործվել<br>Չեմ հասկանում՝ դա ինչ է<br>Կարծում եմ՝ ես լավ եմ սրանից<br>Շատ հմուտ ու փորձառու եմ սրանում | **Նշումներ/օրինակներ** |

| | | |
|---|---|---|
| իմացություն, ծեսերի, ավանդույթների, տոների մասին գիտելիքներ<br>• Հմտություն. ակտիվ ունկնդրում, ակնկալիքների բացահայտում, կարիքների գնահատում, խմբի համակարգում, համախմբում | | |
| **1.4 երիտասարդներին որպես հավասարի ընկալելու ունակություն**<br>Ներառում է<br>• Արժեք. օրինակելի կերպար՝ որպես քրիստոնյա երիտասարդական աշխատող գիտելիք. քրիստոնեական երիտասարդական աշխատողի էթիկական կոդեքս, տարիքային ֆիզիոլոգիական և հոգեբանական առանձնահատկություններ<br>• Հմտություն. պատրաստ հաղթահարելու մարտահրավերները, համբերատարություն | Սա կարևոր չէ իմ աշխատանքի համար<br>Շատ բան ունեմ սովորելու<br>Չգիտեմ<br>Կարող եմ կատարելագործվել<br>Չեմ հասկանում՝ դա ինչ է<br>Կարծում եմ՝ ես լավ եմ սրանից<br>Շատ հմուտ ու փորձառու եմ սրանում | **Նշումներ/օրինակներ** |
| **1.5 երիտասարդական աշխատանքի համատեքստում երիտասարդների անձնային և հուզական խնդիրների քննարկման ունակություն**<br>Ներառում է<br>• Արժեք. ակտիվ լսելու, համբերատարության, զգայունության, ապրումակցման, գաղտնիության պահպանման, հետաքրքրվածության ունակություն<br>• Գիտելիք. քրիստոնյա երիտասարդական աշխատողի էթիկա<br>• Հմտություն. սեփական հույզերի կառավարում, անձնական պատկերացումների չպարտադրող կեցվածք | Սա կարևոր չէ իմ աշխատանքի համար<br>Շատ բան ունեմ սովորելու<br>Չգիտեմ<br>Կարող եմ կատարելագործվել<br>Չեմ հասկանում՝ դա ինչ է<br>Կարծում եմ՝ ես լավ եմ սրանից<br>Շատ հմուտ ու փորձառու եմ սրանում | **Նշումներ/օրինակներ** |







## Գործառույթ 2. Երիտասարդներին ուսուցման հնարավորությունների ապահովում



| | | |
|---|---|---|
| **2.1 Ունակություն աջակցելու երիտասարդների սեփական ուսուցողական կարիքների, ոճերի գիտակցման գործում, նկատի առնելով ամեն մեկի յուրահատկությունները**<br>Ներառում է.<br>• Արժեք. անկեղծություն, աջակցություն երիտասարդներին և հետաքրքրվածություն նրանց տեսակետներով, ուղղորդում<br>• Գիտելիք. տեսությունների սերտում (ոճեր, նախապատվություններ), ոչ ֆորմալ կրթություն և ուսուցում, խմբային դինամիկա, բազմակողմանի զարգացվածություն և | Սա կարևոր չէ իմ աշխատանքի համար<br>Շատ բան ունեմ սովորելու<br>Չգիտեմ<br>Կարող եմ կատարելագործվել<br>Չեմ հասկանում՝ դա ինչ է<br>Կարծում եմ՝ ես լավ եմ սրանից<br>Շատ հմուտ ու փորձառու եմ սրանում | **Նշումներ/օրինակներ** |









| | | |
|---|---|---|
| կրթություն, երիտասարդության մարտահրավերների ճանաչում )<br>• Հմտություն. նպատակների սահմանում, կարիքի գնահատում, քարտեզագրում, համախմբում, առաջնորդում, ներառական կրթական մոտեցումներ, ներառական մեթոդաբանություն | | |
| **2.2 Անհատների ու խմբերի համար ապահով, շահագրգիռ և ներառող կրթական միջավայրի ստեղծում**<br>Ներառում է.<br>• Արժեք. փորձարկումների ցանկություն, երիտասարդներին աջակցություն՝ հատկապես դժվարին իրավիճակներում հայտնվածներին, կոնֆլիկտի դրական ազդեցության ընդունում, լինել առաջատար<br>• Գիտելիք. տեսությունների սերտում (ոճեր, նախապատվություններ), ոչ ֆորմալ կրթություն և ուսուցում, խմբային դինամիկա, բազմակողմանի զարգացվածություն և կրթություն, երիտասարդության մարտահրավերների ճանաչում)<br>• Հմտություն. երիտասարդների մոտիվացիա, քոուչինգ, ստեղծագործական ջիղ, ներառական կրթական հմտություն, խմբի համակարգում, համախմբում, խնդրի ձևակերպում և լուծում, կոնֆլիկտի տրանսֆորմացիա | Սա կարևոր չէ իմ աշխատանքի համար<br>Շատ բան ունեմ սովորելու<br>Զգիտեմ<br>Կարող եմ կատարելագործվել<br>Չեմ հասկանում՝ դա ինչ է<br>Կարծում եմ՝ ես լավ եմ սրանից<br>Շատ հմուտ ու փորձառու եմ սրանում | **Նշումներ/օրինակներ** |
| **2.3 Ուսուցման հանդեպ շահագրգռման և ստեղծարարության զարգացմանը միտված կրթական մեթոդների օգտագործման ունակություն**<br>Ներառում է.<br>• Արժեք. լինել բաց երիտասարդների առաջարկների հանդեպ, թե ինչ են նրանք ցանկանում անել և ինչով են հետաքրքրված, փորձարկումների հանդեպ բաց<br>• Գիտելիք. ոչ ֆորմալ կրթություն և ուսուցում, տարբեր մեթոդներ, գործողությունների մասին տարբեր աղբյուրներ<br>• Հմտություն. սովորել անելով, ստեղծարարություն, հմտությունների կուտակում, ինֆորմացիոն կառավարում, երիտասարդների մոտիվացում և ներգրավում | Սա կարևոր չէ իմ աշխատանքի համար<br>Շատ բան ունեմ սովորելու<br>Զգիտեմ<br>Կարող եմ կատարելագործվել<br>Չեմ հասկանում՝ դա ինչ է<br>Կարծում եմ՝ ես լավ եմ սրանից<br>Շատ հմուտ ու փորձառու եմ սրանում | **Նշումներ/օրինակներ** |
| **2.4 Երիտասարդների համապատասխան և պատշաճ ուղղորդման և հետադարձ կապի ապահովման ունակություն**<br>Ներառում է. | Սա կարևոր չէ իմ աշխատանքի համար<br>Շատ բան ունեմ սովորելու<br>Զգիտեմ<br>Կարող եմ կատարելագործվել | **Նշումներ/օրինակներ** |

| | | |
|---|---|---|
| • Արժեք. ապրումակցում, բաց միտք, օգնելու պատրաստակամություն<br>• Գիտելիք. քրիստոնեական երիտասարդական աշխատանքի էթիկա<br>• Հմտություն. թրեյնինգ, քոուչինգ, մենթորինգ | Չեմ հասկանում՝ դա ինչ է<br>Կարծում եմ՝ ես լավ եմ սրանից<br>Շատ հմուտ ու փորձառու եմ սրանում | |
| **2.5 Երիտասարդների կրթական հնարավորությունների մասին իրազեկման և դրանցից օգտվելու համար աջակցման ունակություն**<br>Ներառում է<br>• Գիտելիք. տեղեկատվություն, խորհրդատվություն և ուղղորդում համապատասխան կրթական/մասնագիտական աղբյուրների, համայնքի ներսում և համայնքից դուրս առկա հնարավորությունների, կրթական կազմակերպությունների և այլն.<br>• Հմտություն. խորհրդատվություն, քոուչինգ, երիտասարդների մոտիվացում | Սա կարևոր չէ իմ աշխատանքի համար<br>Շատ բան ունեմ սովորելու<br>Չգիտեմ<br>Կարող եմ կատարելագործվել<br>Չեմ հասկանում՝ դա ինչ է<br>Կարծում եմ՝ ես լավ եմ սրանից<br>Շատ հմուտ ու փորձառու եմ սրանում | **Նշումներ/օրինակներ** |





## Գործառույթ 3. Աջակցություն երիտասարդներին՝ իրենց սոցիալական միջավայրն առավել լավ պատկերացնել, և դրանում իրենց մասնակցայնության խթանում

| | | |
|---|---|---|
| **3.1 Ունակություն օգնելու երիտասարդներին հասկանալ և համայնքում իրենց դերի հետ կապված պատասխանատվություն վերցնելու կարևորություն**<br>Ներառում է.<br>• Գիտելիք. նվիրապետություն, հավատամք, ներքին կանոնակարգեր, բարեվարքության կանոններ, ռազմավարություն, հայեցակարգ, համակիր/համագործակցող կառույցներ, համայնք, կապեր, երիտասարդական քաղաքականություն<br>• Հմտություն. քննական մտածողություն, ակտիվ լսելու ունակություն, ուղղորդում | Սա կարևոր չէ իմ աշխատանքի համար<br>Շատ բան ունեմ սովորելու<br>Չգիտեմ<br>Կարող եմ կատարելագործվել<br>Չեմ հասկանում՝ դա ինչ է<br>Կարծում եմ՝ ես լավ եմ սրանից<br>Շատ հմուտ ու փորձառու եմ սրանում | **Նշումներ/օրինակներ** |
| **3.2 Ունակություն աջակցել երիտասարդներին սահմանել հոգևոր, ազգային, սոցիալական փոփոխությունների բերող անհատական և խմբային նպատակները, գործելու ռազմավարությունները և գործողությունները**<br>Ներառում է.<br>• Արժեք.հավասարություն, սեր, հանդուրժողականություն<br>• Գիտելիք. երիտասարդների հետաքրքրություններն ու առանձնահերթությունները<br>• Հմտություն. որոշումների կայացման մասնակցային սիստեմ, քրիստոնեական բարոյախոսության գործնական կիրառման քայլեր, գործողությունների պլանավորում, խմբի կանոնակարգում ու համախմբում | Սա կարևոր չէ իմ աշխատանքի համար<br>Շատ բան ունեմ սովորելու<br>Չգիտեմ<br>Կարող եմ կատարելագործվել<br>Չեմ հասկանում՝ դա ինչ է<br>Կարծում եմ՝ ես լավ եմ սրանից<br>Շատ հմուտ ու փորձառու եմ սրանում | **Նշումներ/օրինակներ** |
| **3.3 Ունակություն աջակցել երիտասարդներին զարգացնելու իրենց քննական մտածողությունը և հասարակության, ուժի, սոցիալական և քաղաքական համակարգերի աշխատանքի հետ կապված գիտելիքները, գտնել դրանց վրա ազդեցության հնարավորությունները**<br>Ներառում է.<br>• Գիտելիք.կապեր, ռազմավարություններ, հասարակություն, ներգրավում<br>• Հմտություն. առկա համակարգերի վերաբերյալ տեղեկատվություն ու գրագիտություն, մշտապես զարգանալու կարողություն/ցանկություն, ընտրողական մտածողություն | Սա կարևոր չէ իմ աշխատանքի համար<br>Շատ բան ունեմ սովորելու<br>Չգիտեմ<br>Կարող եմ կատարելագործվել<br>Չեմ հասկանում՝ դա ինչ է<br>Կարծում եմ՝ ես լավ եմ սրանից<br>Շատ հմուտ ու փորձառու եմ սրանում | **Նշումներ/օրինակներ** |
| **3.4 Երիտասարդների ինքնավստահության և ունակությունների զարգացման աջակցության ունակություն**<br>Ներառում է.<br>• Գիտելիք. քոուչինգ, հաղորդակցում, ապրումակցում<br>• Հմտություն. ռիսկային իրավիճակներում պատասխանատվության ստանձնում, նախաձեռնողականություն, բաց փորձարկումների հանդեպ | Սա կարևոր չէ իմ աշխատանքի համար<br>Շատ բան ունեմ սովորելու<br>Չգիտեմ<br>Կարող եմ կատարելագործվել<br>Չեմ հասկանում՝ դա ինչ է<br>Կարծում եմ՝ ես լավ եմ սրանից<br>Շատ հմուտ ու փորձառու եմ սրանում | **Նշումներ/օրինակներ** |

| | | |
|---|---|---|
| **4.1 Գնահատման գործընթացի պլանավորման և իրականացման մեջ երիտասարդների մասնակցայնության ապահովման ունակություն** | Սա կարևոր չէ իմ աշխատանքի համար<br>Շատ բան ունեմ սովորելու<br>Չգիտեմ<br>Կարող եմ կատարելագործվել | **Նշումներ/օրինակներ** |

| | | |
|---|---|---|
| Ներառում է<br>• Գիտելիք. մասնակցայնության գնահատման մոտեցումներ<br>• Հմտություն. ակտիվ լսելու ունակություն, խմբի կառավարում, համակարգում, ընթացիկ գործընթացների վերահսկում, հետազոտական մեթոդների կիրառում, տեղեկատվական և հաղորդակցային տեխնոլոգիաներ | Չեմ հասկանում՝ դա ինչ է<br>Կարծում եմ՝ ես լավ եմ սրանից<br>Շատ հմուտ ու փորձառու եմ սրանում | |
| **4.2 Մասնակցային գնահատման գործընթացների պլանավորման և իրականացման մեթոդների իմացություն և կիրառում**<br>Ներառում է.<br>• Գիտելիք. մասնակցայնության գնահատման մոտեցումներ<br>• Հմտություն. մասնակցային մեթոդներ, ֆասիլիտացիա | Սա կարևոր չէ իմ աշխատանքի համար<br>Շատ բան ունեմ սովորելու<br>Չգիտեմ<br>Կարող եմ կատարելագործվել<br>Չեմ հասկանում՝ դա ինչ է<br>Կարծում եմ՝ ես լավ եմ սրանից<br>Շատ հմուտ ու փորձառու եմ սրանում | **Նշումներ/օրինակներ** |
| **4.3 Սեփական աշխատանքի բարելավման մեջ գնահատման արդյունքների օգտագործման ունակություն**<br>Ներառում է.<br>• Արժեքներ. կոնստրուկտիվ քննադատության և հետադարձ կապի հանդեպ բաց մոտեցում, նոր իրավիճակների ադապտացիա, անձնային նախաձեռնողականություն<br>• Գիտելիք. գնահատում | Սա կարևոր չէ իմ աշխատանքի համար<br>Շատ բան ունեմ սովորելու<br>Չգիտեմ<br>Կարող եմ կատարելագործվել<br>Չեմ հասկանում՝՝ դա ինչ է<br>Կարծում եմ՝ ես լավ եմ սրանից<br>Շատ հմուտ ու փորձառու եմ սրանում | **Նշումներ/օրինակներ** |
| **4.4 Երիտասարդների իրավիճակի և կարիքների վերաբերյալ ժամանակակից ուսումնասիրությունների իրազեկություն**<br>Ներառում է.<br>• Արժեքներ. անձնային նախաձեռնողականություն<br>• Գիտելիք. երիտասարդական հետազոտական մոտեցում, դերակատարներ և աղբյուրներ<br>• Հմտություն. վերլուծություն, տեղեկատվության կառավարում, համակարգում | Սա կարևոր չէ իմ աշխատանքի համար<br>Շատ բան ունեմ սովորելու<br>Չգիտեմ<br>Կարող եմ կատարելագործվել<br>Չեմ հասկանում՝ դա ինչ է<br>Կարծում եմ՝ ես լավ եմ սրանից<br>Շատ հմուտ ու փորձառու եմ սրանում | **Նշումներ/օրինակներ** |

# Գործառույթ 5. Թիմային/կոլեկտիվ ուսուցման սատարում

| | | |
|---|---|---|
| **5.1 Թիմային աշխատանքի գնահատման և դրա արդյունքների օգտագործմամբ աշխատանքի բարելավման ունակություն** | Սա կարևոր չէ իմ աշխատանքի համար<br>Շատ բան ունեմ սովորելու | **Նշումներ/օրինակներ** |
| Ներառում է<br>• Արժեք. անձնային նախաձեռնողականություն, կոնստրուկտիվ քննադատության հանդեպ պատրաստ լինել<br>• Գիտելիք.թիմային աշխատանք, սովորել խմբային ֆորմատով, խմբերի մեջ<br>• Հմտություն. գնահատում, համագործակցություն, հաղորդակցություն, ընկերային հարաբերությունների ստեղծում | Զգիտեմ<br>Կարող եմ կատարելագործվել<br>Չեմ հասկանում՝ դա ինչ է<br>Կարծում եմ՝ ես լավ եմ սրանից<br>Շատ հմուտ ու փորձառու եմ սրանում | |
| **5.2 Թիմում հետադարձ կապի ապահովման ունակություն**<br>Ներառում է<br>• Արժեք. կառուցողական մոտեցում, վստահություն, պատրաստ լինել մարտահրավերների հաղթահարմանը<br>• Հմտություն. հետադարձ կապ, ակտիվ լսելու ունակություն, կոնֆլիկտի փոխակերպում, միջնորդություն | Սա կարևոր չէ իմ աշխատանքի համար<br>Շատ բան ունեմ սովորելու<br>Զգիտեմ<br>Կարող եմ կատարելագործվել<br>Չեմ հասկանում՝ դա ինչ է<br>Կարծում եմ՝ ես լավ եմ սրանից<br>Շատ հմուտ ու փորձառու եմ սրանում | **Նշումներ/օրինակներ** |
| **5.3 Երիտասարդական աշխատանքի վերաբերյալ ակտուալ տեղեկատվության և օրինակների մասին թիմի իրազեկման ունակություն**<br>Ներառում է.<br>• Արժեք. համբերաշխություն, աղբյուրներով կիսվելու պատրաստակամություն<br>• Հմտություն. հաղորդկացություն, ինֆորմացիոն կառավարում | Սա կարևոր չէ իմ աշխատանքի համար<br>Շատ բան ունեմ սովորելու<br>Զգիտեմ<br>Կարող եմ կատարելագործվել<br>Չեմ հասկանում՝ դա ինչ է<br>Կարծում եմ՝ ես լավ եմ սրանից<br>Շատ հմուտ ու փորձառու եմ սրանում | **Նշումներ/օրինակներ** |

## Գործառույթ 6. Երիտասարդաց միությունների զարգացման աջակցում և երիտասարդական ծրագրերի բարելավում



| | | |
|---|---|---|
| **6.1 Ներքին կանոնակարգերի և ծրագրերի սահմանման մեջ երիտասարդների ակտիվ ներգրավման ունակություն**<br>Ներառում է.<br>• Արժեք. թափանցիկություն, անձնական նախաձեռնողականություն<br>• Գիտելիք. կազմակերպում և զարգացում, ռազմավարություն և ծրագրեր<br>• Հմտություն. կարիքի գնահատում, որոշումների կայացման մասնակցային մոդել | Սա կարևոր չէ իմ աշխատանքի համար<br>Շատ բան ունեմ սովորելու<br>Չգիտեմ<br>Կարող եմ կատարելագործվել<br>Չեմ հասկանում դա ինչ է<br>Կարծում եմ՝ ես լավ եմ սրանից<br>Շատ հմուտ ու փորձառու եմ սրանում | **Նշումներ/օրինակներ** |

| | | |
|---|---|---|
| **6.2 Երիտասարդական ծրագրերի մշակման մեջ այլ մարմինների հետ համագործակցության ունակություն**<br>Ներառում է.<br>• Արժեք. այլոց հետ համագործակցելու պատրաստակամություն, համբերատարություն, անձնական նախաձեռնողականություն<br>• Գիտելիք. քրիստոնեական երիտասարդական ռազմավարության կոնցեպտներ, դերակատարներ և մեխանիզմներ<br>• Հմտություն. հաղորդակցություն, կապեր, համագործակցություններ, հանրային խոսք, ներկայացում | Սա կարևոր չէ իմ աշխատանքի համար<br>Շատ բան ունեմ սովորելու<br>Չգիտեմ<br>Կարող եմ կատարելագործվել<br>Չեմ հասկանում՝ դա ինչ է<br>Կարծում եմ՝ ես լավ եմ սրանից<br>Շատ հմուտ ու փորձառու եմ սրանում | **Նշումներ/օրինակներ** |





| | | |
|---|---|---|
| **7.1 Ծրագրային կառավարման մոտեցումների օգտագործման ունակություն**<br>Ներառում է.<br>• Արժեք. անծանոթ իրավիճակներում արագ կողմնորոշում<br>• Գիտելիք. ծրագրի նախագծում և կառավարում<br>• Հմտություն. մենեջմենթ, առաջնորդություն, ներկայացուցչություն, պլանավորում, ֆասիլիտացիա, հաղորդակցություն | Սա կարևոր չէ իմ աշխատանքի համար<br>Շատ բան ունեմ սովորելու<br>Չգիտեմ<br>Կարող եմ կատարելագործվել<br>Չեմ հասկանում՝ դա ինչ է<br>Կարծում եմ՝ ես լավ եմ սրանից<br>Շատ հմուտ ու փորձառու եմ սրանում | **Նշումներ/օրինակներ** |
| **7.2 Միջոցների հայթայթման ունակություն**<br>Ներառում է.<br>• Արժեք. բաց միտք, ազնվություն, թափանցիկություն<br>• Գիտելիք. ռեսուրսների կառավարում<br>• Հմտություն. մարդկային ռեսուրսների կառավարումն և զարգացում, ռեսուրսներ փնտրելու հմտություն, ֆոնդհայթայթում, հաղորդակցություն, կապեր | Սա կարևոր չէ իմ աշխատանքի համար<br>Շատ բան ունեմ սովորելու<br>Չգիտեմ<br>Կարող եմ կատարելագործվել<br>Չեմ հասկանում՝ դա ինչ է<br>Կարծում եմ՝ ես լավ եմ սրանից<br>Շատ հմուտ ու փորձառու եմ սրանում | **Նշումներ/օրինակներ** |
| **7.3 Տարբեր թիրախային խմբերի համար ծրագրերի մասին նյութերի, հաշվետվությունների, ներկայացումների պատրաստման ունակություն**<br>Ներառում է.<br>• Գիտելիք. ներակայացում, հանրային խոսք, հաշվերտվություններ գրելու կարողություն, տարբեր լսարանների համապատասխան մոտեցումների կիրառում<br>• Հմտություն. ինքնավստահություն | Սա կարևոր չէ իմ աշխատանքի համար<br>Շատ բան ունեմ սովորելու<br>Չգիտեմ<br>Կարող եմ կատարելագործվել<br>Չեմ հասկանում դա ինչ է<br>Կարծում եմ ես լավ եմ սրանից<br>Շատ հմուտ ու փորձառու եմ սրանում | **Նշումներ/օրինակներ** |

| | | |
|---|---|---|
| **7.4 Կարիք եղած դեպքում տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ունակություն**<br>Ներառում է.<br>• Արժեք. անձնական նախաձեռնողականություն, հետաքրքրվածություն<br>• Գիտելիք. տեղեկատվություն, հաղորդակցություն և մեդիա գործիքներ (online)<br>• Հմտություն. Տեղեկատվական և հաղորդակցային տեխնոլոգիաների կիրառում ծրագրերում, ստեղծագործ միտք | Սա կարևոր չէ իմ աշխատանքի համար<br>Շատ բան ունեմ սովորելու<br>Չգիտեմ<br>Կարող եմ կատարելագործվել<br>Չեմ հասկանում՝ դա ինչ է<br>Կարծում եմ՝ ես լավ եմ սրանից<br>Շատ հմուտ ու փորձառու եմ սրանում | **Նշումներ/օրինակներ** |